

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ

Ուրբաթ, 19 Հոկտեմբերի, 2007

ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի Յանձնախմբի կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, Հոկտեմբերի 17-ի երեկոյեան ժամը 8-ին, Հոլիվուդի «Գաւառ» ճաշարանում տեղի ունեցաւ հանդիպում-ընթրիք Լոս Անջելոսում գործող հայրենակցական միութիւնների ներկայացուցիչների հետ: Միջոցառմանը մասնակցում էին շուրջ 40 հրաւիրեալներ՝ 14 հայրենակցական միութիւններից: Միջոցառման գլխաւոր նպատակն էր առաւել ամրապնդել կապերը եւ ընդլայնել համագործակցութեան դաշտը Հանրային Կապի Յանձնախմբի եւ յիշեալ միութիւնների միջեւ: Միջոցառման մասին յաւելեալ մանրամասնութիւններ կարելի է լսել Կենտրոնական Կոմիտէի համացանցային ծայնասփիւռով, որի կայքէջի հասցեն է www.ARF1890.com :



Ֆրեզնոյի «Մուսա լեռ» հայրենակցական միութեան վարչութեան Կազմակերպութեամբ, Ֆրեզնոյի զինուորական նշանառութեան ընդարձակ ծառաստանում Սեպտեմբերի 1-ին եւ 2-ին նշուել է Մուսա լեռան հերոսամարտի 92-րդ տարեդարձը: Միջոցառմանը ներկայ են գտնուել բազմաթիւ հայեր՝ Ֆրեզնոյից, Լոս Անջելոսից, Սան Ֆրանցիսկոյից եւ մերձակա շրջաններից: Կիրակի Սեպտեմբերի 2-ի առաւօտեան մատուցուել է Սբ. Պատարագ, ի յիշատակ Մուսա լեռան հերոսների, որոնք աւելի քան 40 օր քաջաբար դիմադրել են թուրքական բանակների դէմ, արհամարհելով ամէն կարգի նեղութիւն եւ տառապանք: Պատարագից յետոյ, ծառաստանում տեղի է ունեցել մատաղի օրհնութիւն եւ Անդաստան, հայկական ժողովրդական պարերի ու շուրջպարերի մթնոլորտում:



«Ֆերահեան» ազգ. վարժարանը՝ Էնսինոյի եւ Նորթ Հիլզի իր համալիրներով, WASC-ի, այն է՝ Western Association of Schools and Colleges կոչուող համանահանգային կազմակերպութեան կողմից վեց տարուայ վարկաւորմամբ, աշակերտութեան թուի նկատառելի աճով եւ ապագայ զարգացման նոր հեռանկարներով թեւակոխեց դպրոցական նոր տարեշրջանը: «Ֆերահեան» վարժարանի առաքելութիւնն է հայկական ջերմիկ միջավայրում, հայկական շունչն ու ոգին, հայերէն լեզուն, հայոց պատմութիւնն ու մշակոյթը փոխանցել ամերիկահայ աշակերտին, նրան պահանջատէր ու յանձնառու հայ դաստիարակելու համար: Վարժարանի վերամուտի առիթով, ծնողա-ուսուցչական ծանօթացման առաջին հանդիպումը տեղի է ունեցել Երեքշաբթի, Սեպտեմբեր 25-ի երեկոյեան ժամը 6:30ին, Էնսինոյի համալիրի «Աւետիսեան» սրահում, ուր ծնողները համախմբուել էին լսելու տնօրէնութեան խօսքը եւ ապա այցելելու իրենց զաւակների դասարանները: Վարժարանի տնօրէն ժան Գոսազեանը իր բարի գալստեան խօսքում, ներկայացրել է ուսումնական նոր տարեշրջանի համար կատարուած փոփոխութիւնները, արձանագրուած նուաճումները եւ վարժարանի ապագայ զարգացման հեռանկարները: Անդրադառնալով տնտեսական յանձնախմբի նուաճումներին, պրն. Գոսազեանը յայտնել է, թէ երկու տարուայ հետեւողական աշխատանքից յետոյ, հնարաւորութիւն է ստեղծուել ընդարձակելու միջնակարգի բաժանմունքը Էնսինոյի համալիրում: Շինարարական ծրագիր կայ նաեւ Նորթ Հիլզի համալիրի համար, ուր ներկայիս ժամանակաւոր դասարանները փոխարինուելու են նորակառոյց շէնքով: Դպրոցի աշակերտութեան թիւը հասել է 752-ի, որին մաս են կազմում մանկամստուրի 140 աշակերտները: Դպրոցն ունի 94 ուսուցիչ ու պաշտօնեայ, տարեկան 4 միլիոն 700 հազար դոլարի բիւջով:



ՀՕՍ-ի 100-ամեակի հիմնադրամի յանձնախմբի կազմակերպութեամբ Ուրբաթ, Սեպտեմբերի 28-ի երեկոյեան ժամը 7:30-ին, տեղի է ունեցել դրամահաւաքի յատուկ միջոցառում, որի ընթացքում հանգանակուել է 22,025 դոլար ՀՕՍ-ի ջանքերով Հայաստանում ու սփիւռքում իրականացուող մարդասիրական ու բարեգործական ծրագրերի համար: Միջոցառմանը մասնակցել են ՀՕՍ-ի բարեկան 100 հրաւիրեալներ: Միջոցառմանը գործադրուել է նաեւ գեղարուեստական յայտագիր:



Ֆրեզնոյում լոյս տեսնող «Ֆրեզնո Բի» ամերիկեան օրաթերթը Հինգշաբթի, Հոկտեմբերի 18-ի համարում հրապարակել է խմբագրական յօդուած, որը վերաբերում է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման 106-րդ բանաձեւին: Խմբագրականը նախ զուգահեռներ է գծել նախագահ Ջորջ Բուշի մերժողական եւ միաժամանակ Դաւայ Լամայի պարզեւատրման կեցուածքների միջեւ: Թերթը հաստատելով հանդերձ, որ նախագահը արդարօրէն պարզեւատրեց տիրեցի կրօնապետին՝ հակառակ Չինաստանի բուռն ընդդիմութեանը, նշել է, թէ նա այնուամենայնիւ չցանկացաւ վշտացնել Թուրքիային պատմականօրէն հաստատուած ճշմարտութեան համար: Խմբագրականը դիտել է տուել, որ այս հակասութիւնը չվրիպեց Միացեալ Նահանգների այն կոնգրէսականների աչքից, որոնք հայութեան կեցուածքի ջերմ պաշտպաններից են: Այս իմաստով, խմբագրականը մէջբերել է վեց կոնգրէսականների յայտարարութիւնը եւ «դիպուկ» նկատել՝ նրանց կեցուածքը: «Այս հարցը Ներկայացուցիչների պալատի բարոյական հիւսուածքի համար լուրջ փորձաքար է: Տեսնենք, թէ Կոնգրէսը ինչպէ՞ս պիտի վերաբերուի այդ հարցի կապակցութեամբ»,- եզրափակել է թերթը:

**Այս լուրերը տրամադրուած են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**